ՅԱՒԵԼՈՒԱԾ Ժ

ԿՈՆԴԱԿՔ ԵՒ ԹՈՒՂԹՔ

Գ.[1]

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՊԻԳ = 1375. ՅԱՆՈՒԱՐ 15.

(Հաստատեալ զՏէր Գրիգոր յարքեպիսկոպոսուրբեան Լեհահայոց)։

✠ *Այս մեր գիր հոգևորական հրամանի աւրհնութիւն է և կրկին հաստատութիւն. ԿՈՍՏԱՆԴԵԱՑ շնորհաւքն Քրիստոսի՝ կաթողիկոսի ընթհանուր ամենայն Հայաստանեայց.*

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, Մեր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգոյ որդիք՝ բնակիչք աստուածապահ մայրաքաղաքիդ Լաւին՝ և ամենայն սահմանեալ վիճակին իւրոյ. քահանայք և աստուածասէր ժողովուրդք մեծ և փոքր, այր և կին. Զոր երեկ առ մեզ՝ պատուելի արքեպիսկոպոս ձեր՝ և մեր ըստ հոգոյ պարծանաց որդիս՝ Տէր Գրիգորս՝ ի հնազանդութիւն մերոյ սուրբ աթոռոյս. զոր և մեք յոյժ սիրով և մեծաւ պատուով ընկալաք զինք՝ որպէս զմեր քաջ սիրեցեալ որդի. Այլ և ունէր ընդ իւր՝ զմեր նախնոյն տված շուրջբերականն, որ և զփառաւոր մայրաքաղաքդ՝ ըզԼ օվզ՝ և զԱլատեմիրտ՝ և զԼուցկայդ՝ մեր որդոյդ Տէր Գրիգորիդ էր պարգևել. Մեք մեծաւ պատվով ընդունեցաք զմեր նախնոյն հաստատած շուրջբերականն, և վասն մեր սիրեցեալ պարծանաց որդոյդ Տէր Գրիգորիդ արժանաւորութեանն՝ հաւանեցաք ի յինք. Եւ մերով հոգևորական, առաքելական և հայրապետական բարձր հրամանաւս՝ կարողութեամբն Աստուծոյ և աղաւթիւք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, վերստին հաստատեցաք զսրբազան արհիեպիսկոպոսդ զՏէր Գրիգորդ ձեզ եպիսկոպոս. և պարգևեցաք դարձեալ իր՝ Տէր Գրիգորիդ՝ զամէնաւրհնեալ ականաւոր քաղաքդ՝ զԼ օվտ՝ զԼուցկայն

1. Ա և Բ թիւ համարուին Կոնդակքն Մեսրովպայ և Թէոդորոսի կաթողիկոսաց. տես ի սկիզբն գրոցս, երես 5 և 9։